ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ԱՆԺԵԼԱ ՍՈՒՐԵՆԻ

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МНАЦАКАНЯН АНЖЕЛА СУРЕНОВНА

ВНЕШНЯЯ ВОЕННАЯ ПОЛИТИКА РА В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02-“Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

Ереван 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Գալստյան Խաչիկ Սամվելի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
Քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Քեռյան Գարիկ Միշայի**
Քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ **Մարտիրոսյան Վլադիմիր Էդուարդի**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-Ռուսական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2023 թ. փետրվարի 24-ին, ժամը 15:00-ին, ԵՊՀ-ում (ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1) գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների» 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:

Սեղմագիրն առաքված է՝ 2023 թ. հունվարի 11-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Պետրոսյան Վահրամ Սամվելի**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель: доктор политических наук, профессор **Галстян Хачик Самвелович**

Официальные оппоненты:
Доктор политических наук, профессор **Керян Гарик Мишаевич**
Кандидат политических наук, доцент **Мартиросян Владимир Эдуардович**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 24 февраля 2023 г. в 15:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 «Политология и международные отношения» ВАК РА. Адрес специализированного совета: РА, Ереван 0025, ул. А. Манукян 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ РА.

Автореферат разослан 11 января 2023 г.

Научный секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент **Петросян Ваграм Самвелович**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը գտնվում է գոյաբանական անվտանգային մարտահրավերների առջև: 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմի ծանր հետևանքները էականորեն փոխել են ՀՀ անվտանգային միջավայրը՝ առաջացնելով անվտանգային ճարտարապետության խորը ճգնաժամ: Ղարաբաղյան պատերազմից հետո Ադրբեջանի հետ առաջացած ուժային անհավասարաչափությունը, սահմանային նոր բնագծերը, Հայաստանի և Արցախի հանրապետությունների խաթարված անվտանգության համակարգերը, Ադրբեջանի սանձազերծած սահմանային ագրեսիան, սպառազինությունների մրցավազքն ու ռազմատենչ հռետորաբանությունը ստեղծում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նոր սպառնալիքներ: Արդյունքում անհրաժեշտություն է առաջանում էապես վերանայելու ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունը, հաշվի առնելու հետպատերազմյան նոր ստատուս քվոյով պայմանավորված իրողությունները՝ դրանով իսկ հրատապ և արդիական դարձնելով նման թեմայով գիտական ուսումնասիրությունների իրականացումը:

Աշխարհաքաղաքական բարդագույն այս իրավիճակում, ելնելով ազգային պետականության պահպանման ու զարգացման հրամայականից, Հայաստանի Հանրապետության համար իր ազգային անվտանգության քաղաքականության հիմնական տարրերին համահունչ նոր արտաքին ռազմական քաղաքականության մշակումն ու իրականացումը կենսական նշանակություն ունեն: Մասնագիտական գրականության մեջ առավելապես որպես «Դավիթ և Գողիաթ» հայտնի սկզբունքը ենթադրում է բոլոր կարողությունների, այդ թվում՝ նյութական ռեսուրսների, հասարակության, աշխարհագրական տեղանքի, ինչպես նաև ինտելեկտուալ ներուժի ներդաշնակ և խելամիտ գործիքավորում մեկ ռազմավարական մտահղացման մեջ: Այն թույլ է տալիս հակամարտող կողմերից մեկին ստանալ ռազմավարական առավելություն՝ խաղաղ պայմաններում զսպելու, իսկ պատերազմի դեպքում ներխուժած կամ ներխուժում պլանավորող հակառակորդի մեծաքանակ ուժերի նկատմամբ

օպերատիվ-մարտավարական և տեխնոլոգիական գերակայություն ձեռք բերելու, ինչպես նաև տալիս է համեմատական առավելություններ՝ տարածքային պաշտպանության համակարգի կիրառումն անկանոն պատերազմի մարտավարության միջոցով իրագործելու համար:

2022 թվականի փետրվարից սկսված ռուս-ուկրաինական հակամարտության համապատկերում նշմարվող նոր աշխարհակարգի ուրվագծերը Հայաստանի Հանրապետության համար լրացուցիչ մարտահրավերներ են դառնում, քանի որ ուժային կենտրոնները, ձևավորելով գլոբալ աշխարհաքաղաքական «խաղի նոր կանոնները», էապես նվազեցնում են փոքր պետությունների մանևրելու հնարավորությունները՝ ազգային էլիտաներին և հասարակություններին կանգնեցնելով կոշտ աշխարհաքաղաքական կողմնորոշումների, երկընտրանքների առջև:

Լինելով փոքր պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը ևս ունի անվտանգության երկընտրանքի ընդգծված հատկանիշներ: Մասնավորապես, անդրադառնալով վերոհիշյալ մարտահրավերներին, ՀՀ բարձրագույն ղեկավարությունից հնչում են հայտարարություններ, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է վարի հնարավորինս հավասարակշռված արտաքին քաղաքականություն, ինչը ենթադրում է հրաժարում փոխլրացման և ներգրավվածության սկզբունքներից, որոնց վրա հիմնված է եղել ՀՀ արտաքին ռազմական քաղաքականությունը վերջին երեսուն տարում: Հավասարակշռման արտաքին քաղաքականությունը իր հերթին Հայաստանի համար հղի է նոր մարտահրավերներով, քանի որ այն նշանակում է միաժամանակ հարաբերությունների կառուցում միջազգային հարաբերությունների, անվտանգության նորմերի ու արժեհամակարգի իրենց տեսլականը ունեցող և տարաբնույթ շահեր հետապնդող աշխարհաքաղաքական կենտրոնների հետ, որոնց ռազմաքաղաքական առաջնահերթությունները հաճախ հակադրվում են: Վերոհիշյալ մարտահրավերը ՀՀ-ն կարող է հաղթահարել միայն աշխարհաքաղաքական փոփոխություններից ելնելով՝ որդեգրելով արագ ադապտացվելու ունակությամբ արտաքին ռազմական քաղաքականություն:

Հանրապետության առջև ծառացած խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է համակարգել Հայաստանի վարած ռազմական քաղաքականությունը, բոլոր մակարդակներում ցուցաբերել ռազմական արվեստ ու դիվանագիտություն և դրանք նպատակաուղղել ՀՀ անվտանգության ապահովմանը:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ սույն ատենախոսության շրջանակներում Հայաստանի Հանրապետության անվտանգության տեսանկյունից արտաքին ռազմական քաղաքականության ամբողջական ու գիտականորեն հիմնավորված վերլուծություն կատարելը թեմային առանձնահատուկ հրատապություն և արդիականություն է հաղորդում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է համակողմանի ուսումնասիրել արտաքին ռազմական քաղաքականության դերը ՀՀ անվտանգության ապահովման հարցում, բացահայտել Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության առանձնահատկություններն ու գնահատել դրա զարգացման հետագա ուղղությունները:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել արտաքին ռազմական քաղաքականության ինստիտուցիոնալացման գործընթացի հիմքերը,
- քննել արտաքին ռազմական քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ անվտանգության համակարգում,
- գիտահետազոտական հենքով գնահատել արտաքին ռազմական քաղաքականության իրականացման ներկա ընթացքն ու տալ այդ քաղաքականության զարգացման հայեցակարգային ուղենիշեր,
- վերլուծել արտաքին ռազմական քաղաքականության ժամանակակից ընկալումներն ու մեկնաբանման հիմնական մոտեցումները, առանձնացնել երկկողմ և բազմակողմ ռազմական համագործակցության գործառույթները ՀՀ անվտանգության ամրապնդման համատեքստում,

- վերլուծել պաշտոնական Երևանի կողմից իրականացվող ռազմական դիվանագիտության ընթացքը, հիմնական ձեռքբերումներն ու թերացումները,
- ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության և միջազգային ռազմական կառույցների համագործակցության ձևաչափերը, վերլուծել դրանց նշանակությունը ՀՀ անվտանգության ապահովման գործում,
- ներկայացնել ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության զարգացման տեսլականը երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակներում:

Հետազոտության օբյեկտը ՀՀ անվտանգության ապահովման գործում ռազմական քաղաքականության բաղադրիչի ուսումնասիրությունն է:

Հետազոտության առարկան ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության բազմաչափության հետազոտումն է:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտությունն իրականացնելիս վերոնշյալ մեթոդաբանության կիրառմամբ ձեռք են բերվել որոշակի գիտական նորույթ պարունակող ինչպես գիտատեսական, այնպես էլ գիտագործնական վերջնարդյունքներ: Մասնավորապես.

1. Համակարգային վերլուծության է ենթարկվել «ռազմական քաղաքականություն» հասկացությունը, բացահայտվել են այդ երևույթի ինստիտուցիոնալացման հիմնական չափումները: Իրականացվել է Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության և ռազմաքաղաքական հիմնախնդիրների համատեքստում արտաքին ռազմական քաղաքականության՝ որպես իրավաքաղաքական գործընթացի համապարփակ ու ամբողջական վերլուծություն: Տրվել է Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության նոր սահմանումը:

2. Հայաստանի Հանրապետության անվտանգության հիմնախնդիրներն ուսումնասիրելիս արտաքին ռազմական քաղաքականությունը դիտարկվել է իրավաքաղաքական գործընթացների լույսի ներքո, որտեղ այն հանդես է գալիս որպես պետական քաղաքականության բաղադրիչ և բնորոշվում է

պետության քաղաքական կուրսի նպատակներով, հնարավորություններով:

3. Իրականացվել է պաշտպանական բարեփոխումների, ռազմարդյունաբերական համալիրի, ռազմական դիվանագիտության, տնտեսական և տեղեկատվական անվտանգության՝ որպես արտաքին ռազմական քաղաքականության բաղադրիչների համակողմանի վերլուծություն: Ըստ այդմ՝ հիմնավորվել է ռազմական քաղաքականությունը պաշտպանողական և հարկ եղած դեպքում՝ հարձակողական չափումներով դիտարկելու անհրաժեշտությունը: Վերջինս, մասնավորապես, ենթադրում է ինչպես ռազմական համագործակցության խորացում դաշնակից երկրների հետ, այնպես էլ նոր դաշնակիցներ ձեռք բերելու միջոցով տարածաշրջանային զարգացումներում Հայաստանի մեկուսացման բացառում:

4. Կարևորվել է ռազմական դիվանագիտության դերն արտաքին ռազմական քաղաքականությունում՝ որպես միջազգային երկկողմ և բազմակողմ համագործակցության հաստատման գործիք: Առաջարկվել է Հայաստան-Վրաստան և Հայաստան-Իրան երկկողմ ռազմաքաղաքական հարաբերությունները խթանելու նպատակով օգտագործել տնտեսական համագործակցությունը՝ զարգացնելով դրանք տնտեսական անվտանգության համատեքստում:

5. Վերլուծվել է ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարների դիսկուրսը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ: Այդ օրինակով վերլուծվել են ՀՀ տեղեկատվական անվտանգային համակարգի բացթողումներն ու առաջարկվել է վերջիներիս հաղթահարման ուղենիշեր:

6. Առաջատար երկրների ռազմական քաղաքականության փորձի համեմատական ուսումնասիրության հիման վրա առաջարկվել են ռազմական ուժային կենտրոնների հետ համագործակցություն զարգացնելու մի շարք ուղղություններ, որոնք միտված են Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացմանը:

7. Խորհրդարանական կառավարման և «հետհեղափոխական» պետաիշխանական կառուցակարգերի նոր ձևաչափին համապատասխան՝ գնահատվել են պաշտպանության

և ռազմական քաղաքականության առջև ծառացող նոր մարտահրավերներն ու հաղթահարման հնարավորությունները՝ դրանք ներառելով արտաքին ռազմական քաղաքականության հետագա ուղենիշում:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության հետազոտության շրջանակը ընդգրկում է Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության արտաքին բաղադրիչն ամբողջությամբ՝ ներառելով ՀՀ ազգային անվտանգության համակարգում առանցքային նշանակություն ունեցող հիմնահարցեր: Արտաքին ռազմական քաղաքականության արդյունավետության գիտատեսական գնահատմամբ՝ ռազմաքաղաքական հիմախնդիրների համատեքստով պայմանավորված արտաքին ռազմաքաղաքական հարաբերությունների ընդլայնումը և դրանց առանձին ուղղությունների վերլուծումն ու կանխատեսումը ընդգծում են ատենախոսության տեսական նշանակությունը:

Կիրառական տեսանկյունից կատարված տեսական ընդհանրացումները, նորովի մեկնաբանություններն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել անվտանգության քաղաքականության դերակատարներին, հետազոտողներին և փորձագետներին: Հետազոտության մեջ առաջարկվող ամփոփումները և եզրահանգումները կարող են հիմք դառնալ ռազմաքաղաքական բնագավառում նոր գիտական հետազոտությունների համար: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության կատարելագործման և հայեցակարգային հիմքերի, ռազմավարական փաստաթղթերի մշակման, ինչպես նաև քաղաքագիտության և ռազմաքաղաքական բնագավառներում առանձին դասընթացների կազմակերպման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի կողմից: Հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են շուրջ մեկ տասնյակ միջազգային գիտաժողովներում՝ ՀՀ-ում Արցախում և օտարերկրյա համալսարաններում, ինչպիսիք են Վարշավայի Եվրոպայի քոլեջը,

Նեապոլի Ֆրիդրիխ 2-րդի անվան համալսարանը, Վարշավայի համալսարանը, Սարաևոյի համալսարանը, ինչպես նաև միջազգային ֆորումներում և ամառային դպրոցներում, ինչպիսիք են Եվրոպական կրթական ուսումնասիրությունների Ժան Մոնեի անվան ամառային դպրոցը, «Լոմոնոսով-2021» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովը և Էներգետիկ համայնքի ամառային դպրոցը: Ատենախոսության հիմնադրույթները շարադրվել են գիտական հանդեսներում տպագրված տասնմեկ հոդվածներում, և ավելի քան մեկ տասնյակ վերլուծական հոդվածներ լույս են տեսել արտերկրի պարբերականներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Հետազոտությունը կազմված է երեք գլուխներից, ինը ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ծավալը 199 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, հիմնահարցի գիտական մշակվածության աստիճանը, ինչպես նաև ատենախոսության գիտական նորույթն ու առաջարկվող հիմնախնդիրների կիրառման հնարավոր ուղղությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության էությունը և հիմնական բնութագրիչները»** գլխում քննարկվում են «ռազմական քաղաքականություն» հասկացությունը և դրա ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, տրվում է ՀՀ ռազմական քաղաքականության սահմանումը: Վերլուծվում են ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթները, ինչպես նաև ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ՀՀ ռազմական քաղաքականության համատեքստում: Քննարկվում են ռազմական քաղաքականության տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և ռազմական

բաղադրիչներն ու վերջիններիս փոխկապակցվածության մեխանիզմները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականությունը բազմակողմ գործակցության շրջանակներում»** գլխում քննվում են Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականությունը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակներում և Հայաստանի Հանրապետություն-ՆԱՏՕ ռազմական համագործակցության դերը ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության մեջ: Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ–ին ներկայացվում է որպես ռազմատեխնիկական՝ զենքի ու ռազմական տեխնիկայի ձեռքբերման և յուրացման տեսանկյունից ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածությունն ու մարտունակությունը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը: Վերլուծվում է Հայաստանի համագործակցությունը Հյուսիսատլանտյան դաշինքի հետ՝ որպես հավասարակշռության պահպանման միջոցով Հայաստանի համար անվտանգության բազմաշերտ համակարգ ստեղծելու գործիք:

Ատենախոսության երրորդ գլխում, որ վերնագրված է **«Հայաստանի Հանրապետության երկկողմ արտաքին ռազմաքաղաքական կապերը»,** դիտարկվում են հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների նշանակությունը ՀՀ ազգային անվտանգության երաշխավորման գործում, հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների առանձնահատկությունները, Իրանի Իսլամական Հանրապետություն դերը ՀՀ ազգային անվտանգության համակարգում և ՀՀ-ԱՄՆ ռազմաքաղաքական հարաբերությունների ներկա փուլն ու զարգացման հնարավորությունները: Վերհանվում են նշյալ ուղղություններով համագործակցության զարգացումը խոչընդոտող պատճառները, ներկայացվում են առաջարկություններ դրանք հաղթահարելու վերաբերյալ, ինչպես նաև վերլուծվում է վերոհիշյալ երկրների ռազմաքաղաքական համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի հետ:

Եզրակացության մեջ ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, տեսական ու

գործնական նշանակություն ունեցող եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնցից մասնավորապես հիշատակելի են հետևյալները.

- Ռազմական քաղաքականությունը որոշ դեպքերում դուրս է գալիս զուտ ռազմական ոլորտի շրջանակներից և ընդգրկում է պետության գործունեության մյուս բնագավառները ևս: Հիմնվելով ռազմական ոլորտում ունեցած ձեռքբերումների, ռազմական փորձագետների վերլուծությունների վրա և հաշվի առնելով ռազմաքաղաքական առաջատար պետությունների ռազմական քաղաքականության փորձը՝ արտաքին ռազմական քաղաքականությունը կարելի է ձևակերպել որպես պետական մարմինների կողմից ռազմաքաղաքական ոլորտում իրականացվող կարևորագույն գործունեություն, որը նպատակաուղղված է ազգային անվտանգության արժեքների պահպանմանը, դաշնակցային հարաբերությունների և դաշինքների ամրապնդմանն ու նորերի ձեռքբերմանը, ինչպես նաև ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացմանը:
- Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական համակարգը կազմված է տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և զուտ ռազմական բաղադրիչներից, որոնք սերտորեն փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Հայաստանի արտաքին ռազմական քաղաքականությունը պետք է նպատակաուղղել ռազմական անվտանգության համակարգի ապահովման որակական այնպիսի առավելությանը, որը կապահովի Հայաստանի ռազմական համակարգի գերազանցությունը տարածաշրջանում:
- Հայաստանի Հանրապետության անվտանգային քաղաքականության վերափոխման գործում բավականին ուսանելի կարող է լինել Սինգապուրի փորձը, որը տեխնոլոգիաները համադրում է կանխարգելիչ հարված հասցնելու կարողությանը՝ դրանով իսկ ապահովելով ակտիվ զսպում՝ իրական ներուժով հակառակորդի նկատմամբ արագ, խորքային և գերճշգրիտ խոցումներ իրականացնելու համար:
- Հայաստանի Հանրապետության պարագայում կանխարգելիչ հարվածի սկզբունքը արդարացված է, քանի որ մեր երկրին բնորոշ են էնդեմիկ խոցելիությունը, տարածքի փոքրությունը, ռազմավարական թիկունքի բացակայությունը և

նյութական ու մարդկային ռեսուրսների սակավությունը: Այս պարագայում կանխարգելիչ հարվածը համարվում է ակտիվ ինքնապաշտպանություն, որը իր հերթին չի հակասում ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներին, քանի որ այն նպատկաուղղված է պետության ինքնապաշտպանությանը, այլ ոչ թե ագրեսիա իրականացնելուն:

- Հայաստանի Հանրապետության ձեռնարկած պաշտպանական բարեփոխումների գերխնդիրը հակառակորդի զինված ուժերի նկատմամբ ՀՀ զինված ուժերի մարտունակության գերազանցությունն ապահովելն է, զինված ուժերի այնպիսի չափանիշների ստեղծումը և ներդրումը, որոնք լիարժեքորեն կհամապատասխանեն Հայաստանի ազգային անվտանգության առանձնահատկություններին՝ լիարժեքորեն լուծելով արտաքին ռազմական քաղաքականության և պետության անվտանգության խնդիրները: Բարեփոխումների արդյունքում միաժամանակ ապահովվում են փոխգործակցելիության անհրաժեշտ հնարավորություններ՝ Հայաստանի միջազգային վարկի և հեղինակության բարձրացմանը համարժեք համաշխարհային անվտանգության երաշխավորման չափաբաժին ստանձնելու համար:
- Ռազմական արդյունաբերությունը ռազմական քաղաքականության այն հիմքային ուղղությունն է, որի շնորհիվ հնարավոր է ոչ միայն որոշակիորեն փոխհատուցել երկրի պաշտպանության համակարգում կատարված ծախսային ներդրումները, այլև պաշտպանական ենթակառուցվածքները դարձնել տնտեսության համար եկամտաբեր: Ռազմական քաղաքականության մեջ ռազմարդյունաբերական ոլորտի զարգացումը կարևոր է զինված ուժերի մարտունակության մեծացման տեսանկյունից, քանի որ հնարավորություն է տալիս սպառազինության և ռազմական տեխնիկայի նորոգման, արդիականացման, նոր նմուշների մշակման գործում հնարավորինս զերծ մնալու այլ երկրների կամայականություններից և զարգացնելու հայրենական արդյունաբերությունը:
- Ռազմական դիվանագիտությունը դիվանագիտության հատուկ ոլորտ է, որը անվտանգային և պաշտպանական քաղաքականությունում հետապնդում է պետության արտաքին

քաղաքական շահերը: Ատենախոսության մեջ ներկայացված վերլուծության և մասնագետների տեսակետների ընդհանրացմամբ՝ ռազմական դիվանագիտությունը կարելի է սահմանել որպես պաշտպանական կառույցների, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրականացվող գործունեություն, որը նպատակաուղղված է ապահովելու պետության արտաքին շահերը քաղաքական և անվտանգային ոլորտներում, և որի գործունեությունը հիմնված է բանակցությունների և դիվանագիտական գործիքների կիրառման վրա: Ռազմական դիվանագիտությունը կարելի է բաժանել երկու տեսակի՝ պասիվ և ակտիվ: Պասիվ ռազմական դիվանագիտությունն իրականացվում է ռազմական կցորդների կողմից, իսկ ակտիվ ռազմական դիվանագիտությունն իրականացվում է խաղաղապահ առաքելությունների միջոցով:

- ԱՊՀ-ն, որը նպատակ ուներ լրացնել ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած ռազմաքաղաքական և տնտեսական բացը, զգալի ներդրում ունեցավ նախկին խորհրդային հանրապետությունների միջև ձևավորված տնտեսական, ռազմաքաղաքական կապերի լիակատար փլուզումը կանխելու հարցում: Սակայն ներկայումս առկա է մի իրավիճակ, երբ ԱՊՀ անդամ պետությունների միջև ծագած հակամարտությունները ամբողջովին հակասում են ԱՊՀ կանոնադրությանը: Եթե 1990-ականներին ԱՊՀ երկրները միևնույն հարթակի վրա էին ընկալվում միջազգային հանրության կողմից, ապա այժմ ԱՊՀ անդամ երկրները միջազգային հանրության կողմից գնահատվում են ըստ իրենց էներգետիկ ռեսուրսների և Ռուսաստանի հետ հարաբերությունների մակարդակի:
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը ակտիվորեն ներգրավված է ՀԱՊԿ ռազմական բաղադրիչի գրեթե բոլոր գործընթացներում: Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ–ին ռազմատեխնիկական, զենքի ու ռազմական տեխնիկայի ձեռքբերման և յուրացման տեսանկյունից ՀՀ զինված ուժերի մարտական պատրաստվածությունն ու մարտունակությունը պայմանավորող կարևորագույն գործոններից է:
- Հայաստանը ԵԱՏՄ-ին այլընտրանք չունի, քանի որ Արևելյան գործընկերությունը չի նախատեսում անդամ երկրների

անդամակցությունը Եվրամիությանը: Հետևապես, Հայաստանը պետք է հնարավորինս խորացնի ԵԱՏՄ շրջանակներում երկկողմ և բազմակողմ համագործակցությունը: Երկկողմ համագործակցության խորացման շնորհիվ Հայաստանը կարող է հասնել այն բանին, որ ԵԱՏՄ անդամ երկրներն իրենց արտաքին քաղաքականությունը կառուցելիս չանտեսեն Հայաստանի շահերը: Ինչպես նաև Հայաստանը կարող է ԵԱՏՄ-ն կապել Իրանի Իսլամական Հանրապետության հետ, հատկապես որ դրա համար առկա են բոլոր անհրաժեշտ նախադրյալները, եթե հաշվի առնենք, որ 2019 թվականին Իրանը մասնակցեց Հայաստանում անցկացված ԵԱՏՄ ղեկավարների նիստին: Նշենք, որ ԵԱՏՄ-Իրան հարաբերություններում կապող օղակ դառնալը էականորեն կբարձրացնի Հայաստանի վարկանիշը կազմակերպության ներսում:

- Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններում երկու կողմերն էլ գիտակցում են, որ դրանք սահմանափակ են և առավելապես կենտրոնանում են Հայաստանի պաշտպանական համակարգի զարգացման, մասնավորապես ՆԱՏՕ-ի ռազմական բաղադրիչի հետ համատեղելիության ապահովման վրա՝ նպատակ հետապնդելով մեծացնել երկրի ռազմավարական նշանակությունը: Լինելով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ՝ Հայաստանը շարունակում է խորացնել կապերը Հյուսիսատլանտյան դաշինքի հետ, փորձում նուրբ հավասարակշռություն պահպանելով՝ իր համար ստեղծել անվտանգության բազմաշերտ համակարգ, որը թույլ կտա սեփական անվտանգության ապահովման համար հենվել ոչ թե մեկ, այլ մի քանի ուժերի վրա:
- Հայ-վրացական ռազմական հարաբերությունների զարգացումը պետք է դիտարկել երկու պետությունների տնտեսական անվտանգության համատեքստում: Ադրբեջան-Թուրքիա-Վրաստան եռակողմ համագործակցությանը Հայաստանը կարող է հակազդել Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ և Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան քառակողմ («Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք») տնտեսական հարաբերությունները զարգացնելով: Վերոհիշյալ ուղղություններով ամուր տնտեսական հարաբերությունների առկայությունը անվտանգության երաշխիք կդառնա Հայաստանի

համար և կնպաստի հայ-վրացական քաղաքական համագործակցությունների զարգացմանը:

- «Նոր մետաքսի ճանապարհ» հայեցակարգով պայմանավորված՝ Իրանում մեծանում է հետաքրքրությունը տարանցիկ ճանապարհ ստեղծելու գաղափարի նկատմամբ, հետևաբար նաև Հայաստանի հետ համագործակցելու հարցում: Իրանցի բարձրաստիճան տարբեր պաշտոնյաններ ժամանակ առ ժամանակ բարձրաձայնում են Հայաստանի հետ ռազմավարական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության մասին: Բայցևայնպես, թեև որոշ քայլեր կատարվել են այդ ուղղությամբ, մասնավորապես 2002 թվականի մարտին ԻԻՀ պաշտպանության նախարար Ալի Շամխանիի Երևան կատարած այցի ընթացքում ստորագրվել է երկու պետությունների անվտանգության և ռազմական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր, սակայն Հայաստանը և Իրանը չունեն ռազմավարական հարաբերությունները կարգավորող պայմանագիր:
- Հայ-ռուսական հարաբերությունները առաջին հերթին բնութագրվում են անվտանգության բնագավառում ակտիվ և արդյունավետ համագործակցությամբ, ինչի արդյունքում Հայաստանի արտաքին ռազմական քաղաքականության մեջ Ռուսաստանը հատուկ տեղ է գրավում: Իր հերթին Հայաստանի՝ որպես ռազմավարական գործընկերոջ կարևորությունը Ռուսաստանի համար արտահայտվում է ոչ միայն Հարավային Կովկասում ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդման անհրաժեշտությամբ, այլև Մերձավոր Արևելքում ազդեցության և ռազմավարական դիրքերի պահպանման առավելությամբ, նպաստավոր դաշտ է ստեղծում Ռուսաստանի և Հայաստանի ռազմավարական հակառակորդների ազդեցությունը և թշնամական գաղափարախոսությունների ներթափանցումը կանխարգելելու համար:
- Հայ-ռուսական ռազմական համագործակցությունը ուղղված լինելով ՀՀ զինված ուժերի կադրային, սպառազինության, ռազմատեխնիկական, մարտական պատրաստության, թիկունքային և այլ կարիքների ապահովման խնդիրների լուծմանը՝ միաժամանակ կարևոր ռազմաքաղաքական նշանակություն ունի և իրականացվում է ինչպես Հայաստանի և Ռուսաստանի պաշտպանության նախարարությունների միջև

երկկողմ համագործակցության նախապես հաստատված տարեկան պլանի հիման վրա, այնպես էլ արտապլանային եղանակով ձեռք բերվող պայմանավորվածությունների համաձայն: Տարածաշրջանում մրցակցության ակտիվացման, անջատողականության աշխուժացմանը զուգընթաց՝ Ռուսաստանը հետևողական քայլեր է ձեռնարկում Հարավային Կովկասում իր դիրքերն ամրապնդելու ուղղությամբ՝ դրանով իսկ մեծացնելով հայ-ռուսական ռազմական համագործակցության նշանակությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. **Մնացականյան Ա.,** Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթները // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան 2022, № 3 (39), էջ 63-76:

2. **Մնացականյան Ա.,** Հայ-թուրքական հարաբերությունները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, Երևան 2018, հունվար-ապրիլ, 1(652), էջ 40-49:

3. **Մնացականյան Ա.,** Վրաստանի Հանրապետությանը վերաբերող՝ Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության ուղղությունը // «Կաճառ», ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան 2018, էջ 60-66:

4. **Մնացականյան Ա.,** ՀԱՊԿ-ը ՀՀ արտաքին ռազմական քաղաքականության համատեքստում // «21-րդ դար», տեղեկատվական-վերլուծական հանդես, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան 2018, 4(80), էջ 40-51:

5. **Մնացականյան Ա.,** ՀՀ ռազմական քաղաքականությունը, որպես պետականության ամրապնդման երաշխիք // «Գիտական Արցախ» գիտական պարբերական, Երևանի պետական համալսարան, Երևան 2018, N 1, էջ 212-217:

6. **Մնացականյան Ա.,** Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության ռազմաքաղաքական հարաբերությունների համառոտ վերլուծություն // «Արդարադատություն», ՀՀ արդարադատության նախարարության

իրավաբանական ինստիտուտ, մարտ 1(36), Երևան 2017, էջ 73-80:

7. **Մնացականյան Ա.,** Միջազգային մակարդակում Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության համառոտ վերլուծությունը // «Կրթությունը և գիտությունը Արցախում», ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն, Ստեփանակերտ, հունվար-հուլիս 2017, 1-2, էջ 61-69:

8. **Մնացականյան Ա.,** Տարածաշրջանային մակարդակում Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականության համառոտ վերլուծությունը, «Ակունք», Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Երևան 2017, 1(15), էջ 186-195:

9. **Մնացականյան Ա.**, ՀՀ-ՆԱՏՕ ռազմական հարաբերությունների համառոտ վերլուծությունը // «Կաճառ», ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան 2017, էջ 183-191:

10. **Մնացականյան Ա.,** Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հենքային փաստաթղթերի համեմատական վերլուծությունը // «Արդարադատություն», ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ, Երևան 2016, մարտ 1(32), էջ 55-61:

11. **Մնացականյան Ա.,** Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական որոշ հիմնահարցերի համառոտ վերլուծություն // «Կաճառ», ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Երևան 2016, էջ 88-96:

МНАЦАКАНЯН АНЖЕЛА СУРЕНОВНА

ВНЕШНЯЯ ВОЕННАЯ ПОЛИТИКА РА В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02-"Политические институты и процессы".
Защита состоится 24 февраля, 2023 г., в 15:00 часов на заседании специализированного совета 056 "Политология и международные отношения" ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

РЕЗЮМЕ

Целью исследования является изучение военно-политической компонент в безопасности РА, при многомерности внешней военной политики РА.

Во введении обосновывается актуальность темы, цели и задачи исследования, объект и предмет исследования, степень научной изученности проблемы, а также научная новизна диссертации и возможные направления исследования, определение применения предложенных задач.

В первой главе диссертации **«Сущность и основные характеристики военной политики Республики Армения»** рассматриваются понятие военной политики и ее институциональные особенности, а также дается определение внешней военной политики Республики Армения. Выделены экономические, политические, дипломатические и военные составляющие военной политики и проанализирована их взаимосвязь.
Во второй главе диссертации **«Внешняя военная политика Республики Армения в рамках многостороннего сотрудничества»** проанализирована военная политика Республики Армения в рамках Организации Договора о коллективной безопасности и НАТО - Армения военное сотрудничество. Членство

Армении в ОДКБ представлено как один из важнейших факторов определяющих боеготовность и боеспособность вооруженных сил РА с точки зрения приобретения и присвоения военно-технической, вооруженной и военной техники, сотрудничества Армении с НАТО как инструмент создания многоуровневой системы безопасности Армении посредством поддержания баланса.

В третьей главе диссертации **«Двусторонние внешнеполитические отношения Республики Армения»** рассматривается значение армяно-русских военно-политических отношений в обеспечении национальной безопасности Армения, особенности военно политических отношении Армении с Грузии, роль Исламской Республики Ирана в системе национальной безопасности Армении и текущий уровень армяно-американских отношений в сфере безопасности и перспективы развития. В диссертации выделены причины препятствующие развитию указанных коопераций и рекомендации по их преодолению.

В **заключении** представлены основные результаты исследования, выводы и рекомендации, имеющие теоретическое и практическое значение.

MNATSAKANYAN ANZHELA

THE FOREIGN MILITARY POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF SECURITY

Dissertation under 23.00.02-"Political Institutions and Processes" aspiring to earn Ph.D. in Political Science.
The public defense will take place on February 24, 2023, at 15:00, at the Yerevan State University, at 056 "Political Science and International Relations" HAC Specialized Chamber session (Address A. Manukyan street 1, Yerevan 0025, Republic of Armenia).

SUMMARY

The research's purpose is to study the military-political component in the context of the security of the Republic of Armenia, with the multi-dimensionality of the foreign military policy of Armenia.

In the introduction, the topicality of the topic is justified, the goals and objectives of the research, the object, and subject of the study, the degree of the scientific study of the problem, as well as the scientific novelty of the dissertation and possible directions of application of the proposed issues are defined.

In the first chapter of the dissertation, **"Essence and main characteristics of the military policy of the Republic of Armenia,"** the concept of military policy and its institutional features are discussed, and the definition of the foreign military policy of the Republic of Armenia is given. Economic, political, diplomatic, and military components of the military policy are highlighted, and their interrelationship is analyzed.

The second chapter of the dissertation, **"Foreign military policy of the Republic of Armenia within the framework of multilateral cooperation,"** presents the military policy of the Republic of Armenia within the framework of the Collective Security Treaty Organization and the role of the Republic of Armenia-NATO military cooperation in the foreign military policy of the Republic of Armenia. Armenia's

membership in the CSTO is presented as one of the most critical factors determining the combat readiness and combat capability of the RA armed forces from the point of view of acquisition and appropriation of military-technical, weapons and military equipment and Armenia's cooperation with the North Atlantic Alliance as a tool for creating a multi-layered security system for Armenia through maintaining balance.

The third chapter of the dissertation, **"Bilateral Foreign Military-Political Relations of the Republic of Armenia,"** considers the importance of the Armenian-Russian military-political relations in guaranteeing the national security of the Republic of Armenia, the features of the Armenian-Georgian military-political ties, the role of the Islamic Republic of Iran in the national security system of the Republic of Armenia, and the current stage of the RA-US military-political relations and development opportunities. In the dissertation, the reasons hindering the development of the mentioned cooperations are highlighted, and recommendations are presented to overcome them.

In **conclusion**, the main results of the research, findings, and recommendations of theoretical and practical importance are presented.